Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրում (այսուհետ՝ Կրթահամալիր) «Արդի ժամանակաշրջանում օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները» թեմայով ուսանողների գիտական զեկույցների միջբուհական մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կանոնակարգը սահմանում է մրցույթի անցկացման նպատակը և կազմակերպման կարգը:
2. Մրցույթն անցկացվում է Կրթահամալիրի և Հայաստանի Հանրապետության այլ բուհերի իրավագիտության ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման ուսանողների շրջանում: Մրցույթի նպատակն է տաղանդավոր ուսանողների հայտնաբերումը, ովքեր ունակ են ստեղծագործաբար լուծել հետազոտական բնույթի խնդիրներ և դրսևորել ինքնուրույնություն նոր գիտելիքներ ձեռք բերելիս ու դրանք գործնականում կիրառելիս:
3. Մրցույթին մասնակցելու համար կարող են ներկայացվել գիտական զեկույցներ հետևյալ ոլորտների վերաբերյալ՝
1) Արդի ժամանակաշրջանում քրեական օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները,
2) Արդի ժամանակաշրջանում քրեադատավարական օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները,
3) ՀՀ օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների լույսի ներքո,
4) Արդի ժամանակաշրջանում մասնավոր իրավունքի ոլորտի օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները,
5) Արդի ժամանակաշրջանում վարչական իրավունքի ոլորտի օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները:
4. Մրցույթին ներկայացվում են նախկինում այլ մրցույթներին չմասնակցած ավարտուն գիտական զեկույցներ հայերեն լեզվով, որոնք կատարված են ինքուրույն, սեփական հետազոտությունների արդյունքների հիման վրա:
5. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր:
6. Մրցույթի գրավոր փուլում ներկայացված գիտական զեկույցները ենթարկվում են փորձագիտական գնահատման մրցութային հանձնաժողովի կողմից: Մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետ, ոստիկանության փոխգնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ. Մուրադյանը (հանձնաժողովի նախագահ), իրավագիտության ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմը (անդամներ) և ակադեմիայի հեռակա ուսուցման ֆակուլտետի կրտսեր տեսուչ, ոստիկանության ավագ սերժանտ Ի. Խաչատրյանը (հանձնաժողովի քարտուղար):
7. Մրցույթին ներկայացված գիտական զեկույցները հետ չեն վերադարձվում:
8. Մրցույթի գրավոր փուլն անցկացվում է 2018 թվականի մարտի 15-ից ապրիլի 5-ը:
9. Գրավոր փուլին մասնակցելու համար գիտական զեկույցի էլեկտրոնային տարբերակը անհրաժեշտ է մինչև 2018 թվականի մարտի 15-ը ուղարկել մրցութային հանձնաժողովի քարտուղարին՝ gitazhoxov2018@mail.ru էլեկտրոնային փոստին:

Գիտական զեկույցին կից անհրաժեշտ է ուղարկել նաև մասնակցության հայտ (համաձայն հավելված 1-ի):

10. Գիտական զեկույցը պետք է պարաստված լինի Microsoft Word տեքստային խմբագրի միջոցով, Sylfaen տառատեսակով, 12 տառաչափով, 1.5 միջտողային հեռավորությամբ, A4 թղթի մի կողմի վրա, բոլոր կողմերից պահպանելով 2 սմ լուսանցք: Հղումները կատարվում են 10 տառաչափով, 1 միջտողային հեռավորությամբ, անգլերեն և ռուսերեն լեզուներով հղումները՝ Times New Roman տառատեսակով: Գիտական զեկույցի ծավալը (առանց հավելվածների) չպետք է գերազանցի 35 թերթը:

11. Գիտական զեկույցի կառուցվածքային մասերն են՝

- Տիտղոսաթերթը,
- Բովանդակությունը,
- Ներածությունը,
- Հիմնական մասը,
- Եզրակացությունը,
- Օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկը,
- Հավելվածները (առկայության դեպքում):

12. Տիտղոսաթերթի վրա նշվում է գիտական զեկույցի թեման և սույն կանոնակարգի 3-րդ կետով նախատեսված կոնկրետ ոլորտը: Հեղինակի մասին տվյալները տիտղոսաթերթի վրա չեն նշվում:

13. Բովանդակության մեջ ներկայացվում են գիտական զեկույցի կառուցվածքային մասերի անվանումները (ներածություն, գլուխներ, պարագրաֆներ, եզրակացություն, օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկ, հավելվածներ)՝ նշելով աշխատանքի համապատասխան էջը:

14. Ներածության մեջ ներկայացվում է թեմայի արդիականությունը, զեկույցի գիտական նորույթը, հետազոտության նպատակը և խնդիրները, մեթոդները:

15. Հիմնական մասը կարող է բաժանվել գլուխների և պարագրաֆների, որոնցից յուրաքանչյուրը պետք է ունենա իր վերնագիրը:

16. Եզրակացության մեջ ներկայացվում են կատարված հետազոտության արդյունքներով արված առաջարկություններն ու եզրահանգումները:

17. Օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկը ձևակերպվում է այբբենական կարգով:

18. Գիտական զեկույցի կառուցվածքային մասերի վերնագրերը գրվում են մեծատառերով: Ներածությունը, հիմնական մասը, եզրակացությունը և օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկը գրվում են նոր էջից:

19. Գիտական զեկույցի էջերը համարակալվում են արաբական թվանշաններով, էջի ներքևի աջ անկյունում: Տիտղոսաթերթը ներառվում է էջերի ընդհանուր թվի մեջ, բայց դրա վրա էջի համար չի դրվում:

20. Մրցութային հանձնաժողովի քարտուղարը 2018 թվականի մարտի 15-ին գիտական զեկույցները առանց հեղինակի մասին տվյալների ներկայացնում է հանձնաժողովի համապատասխան անդամներին՝ եզրակացություն տալու համար:

21. Գիտական զեկույցի գնահատման արդյունքներով մրցութային հանձնաժողովի համապատասխան անդամի կողմից մինչև 2018 թվականի ապրիլի 5-ը պատրաստվում է եզրակացություն (համաձայն հավելված 2-ի), որը ներկայացվում է հանձնաժողովի նախագահին:

22. Գիտական զեկույցի գնահատման չափանիշներն են՝

- թեմայի արդիականությունը,
- գիտական նորույթը,

- թեմայի ուսումնասիրման լրիվությունը,
- գիտա-մեթոդական մակարդակը,
- եզրահանգումների և առաջարկությունների հիմնավորվածությունը:

23. Յուրաքանչյուր չափանիշ գնահատվում է 0-ից 10 միավոր: Չափանիշի գնահատականը որոշվում է միավորների քանակով, հետևյալ սահմաններում՝

- 0-2 միավոր (շատ ցածր),
- 3-4 միավոր (ցածր),
- 5-6 միավոր (միջին),
- 7-8 միավոր (բարձր),
- 9-10 միավոր (շատ բարձր):

24. Մրցույթի բանավոր փուլ են անցնում 35-ից 50 միավոր հավաքած գիտական զեկույցները:

25. Մրցույթի գրավոր փուլի արդյունքները մինչև 2018 թվականի ապրիլի 6-ը ամրագրվում են արձանագրությամբ, որը ստորագրվում է մրցութային հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից: Արձանագրությունը պահպանվում է հանձնաժողովի նախագահի մոտ մինչև մրցույթի ավարտը: Մրցույթի բոլոր մասնակիցները հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային փոստով կամ հեռախոսով տեղեկացվում են գրավոր փուլի արդյունքների մասին:

26. Մրցույթի բանավոր փուլն անցկացվում է 2018 թվականի ապրիլի 9-ից 13-ը ընկած ժամանակահատվածում, գիտաժողովի ձևաչափով:

27. Մրցույթի բանավոր փուլի անցկացման համար Կրթահամալիրի պետի հրամանով ձևավորվում է մրցութային հանձնաժողով, որում ներառվում են ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ դատախազության, ՀՀ Քննչական կոմիտեի, ՀՀ ոստիկանության, ՀՀ Փաստաբանական պալատի, ՀՀ դատական համակարգի, այլ պետական մարմինների ներկայացուցիչներ (իրենց հետ համաձայնեցնելով)՝ հաշվի առնելով բանավոր փուլ անցած գիտական զեկույցների թեմաների ուղղվածությունը:

28. Մրցութային հանձնաժողովի անդամներին նախապես տրամադրվում են բանավոր փուլ անցած գիտական զեկույցների էլեկտրոնային տարբերակները:

29. Բանավոր փուլ անցած ուսանողները գիտաժողովի ընթացքում մինչև 15 րոպե տևողությամբ ներկայացնում են իրենց գիտական զեկույցները: Մրցութային հանձնաժողովի անդամները կարող են թեմային վերաբերող հարցեր տալ ելույթ ունեցողներին:

30. Ուսանողների ելույթների գնահատման չափանիշներն են՝

- ելույթի համապատասխանությունը գիտական աշխատանքի թեմային,
- թեմային տիրապետելու մակարդակը,
- սեփական դիրքորոշումը հիմնավորելու և հարցերին պատասխանելու ունակությունը,
- հռետորական հմտությունները,
- ելույթի համակարգվածությունը:

31. Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գնահատում է յուրաքանչյուր ուսանողի ելույթը՝ յուրաքանչյուր չափանիշին տալով 0-ից 10 միավոր: Գնահատականները ամրագրվում են գնահատման աղյուսակում (համաձայն հավելված 3-ի):

32. Յուրաքանչյուր չափանիշի գնահատականը որոշվում է միավորների քանակով, հետևյալ սահմաններում՝

- 0-2 միավոր (շատ ցածր),
- 3-4 միավոր (ցածր),

- 5-6 միավոր (միջին),
- 7-8 միավոր (բարձր),
- 9-10 միավոր (շատ բարձր):

33. Մրցութային հանձնաժողովի անդամների՝ յուրաքանչյուր ելույթին տրված գնահատականները գումարվում են, ինչի արդյուքնում որոշվում են 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրած ուսանողները: Միավորների հավասարության դեպքում նախապատվությունը տրվում է գրավոր փուլում առավել բարձր միավորներ հավաքած ուսանողին:

34. Մրցանակային տեղեր զբաղեցրած ուսանողները պարգևատրվում են մրցանակներով և պատվոգրերով, իսկ մրցույթի բանավոր փուլին մասնակցած մյուս ուսանողները ստանում են շնորհակալագրեր:

35. Մրցույթի բանավոր փուլին ներկայացված գիտական զեկույցները ներառվում են ուսանողական գիտաժողովի նյութերում, որը հրատարակվում է Կրթահամալիրի կողմից:

Հավելված 1

«Արդի ժամանակաշրջանում օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները» թեմայով ուսանողների գիտական զեկույցների միջբուհական մրցույթին

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Մասնակցի անուն, ազգանուն, հայրանուն	
ԲՈՒՀ-ի անվանումը, ֆակուլտետը	
Կրթական ծրագիրը (բակալավրիատ, մագիստրատուրա), կուրսը	
Գիտական զեկույցի թեման	
Հեռախոսահամարը	
Էլեկտրոնային փոստի հասցեն	

Հավելված 2

«Արդի ժամանակաշրջանում օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները» թեմայով ուսանողների գիտական զեկույցների միջբուհական մրցույթին ներկայացված գիտական զեկույցի գնահատման

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գիտական զեկույցի թեման _____

_____

_____

№	Գնահատման չափանիշը	Միավորը[1]
1	**թեմայի արդիականությունը** (գիտական հետազոտության կատարման անհրաժեշտության հիմնավորումը)	
2	**գիտական նորույթը** (նորարար մոտեցումների առկայությունը)	
3	**թեմայի ուսումնասիրման լրիվությունը** (թեմայի համապատասխանությունը աշխատանքի բովանդակությանը, առաջադրված նպատակի և խնդիրների իրականացումը)	
4	**գիտա-մեթոդական մակարդակը** (հետազոտության ստեղծագործական մոտեցումը, շարադրանքի ոճի գիտականությունը)	
5	**եզրահանգումների և առաջարկությունների հիմնավորվածությունը** (բերված փաստարկների արժանահավատությունը, համակարգվածությունը, բավարարությունը)	
	Ընդհանուր միավորը	

Եզրահանգում (չափանիշների գնահատման հիմնավորումը)՝

1._____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

[1] Յուրաքանչյուր չափանիշի գնահատականը որոշվում է միավորների քանակով, հետևյալ սահմաններում՝ 0-2 միավոր (շատ ցածր), 3-4 միավոր (ցածր), 5-6 միավոր (միջին), 7-8 միավոր (բարձր), 9-10 միավոր (շատ բարձր):

2.

3.

4.

5.

Մրցութային հանձնաժողովի անդամի պաշտոնը, ԱԱՀ ստորագրությունը ամսաթիվը

Հավելված 3

«Արդի ժամանակաշրջանում օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները» թեմայով ուսանողների գիտական զեկույցների միջբուհական մրցույթի բանավոր փուլի ելույթների

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

ՈՒսանողի անուն, ազգանունը	Գնահատականը ըստ չափանիշների[2]					Ընդհանուր միավորը
	Չափանիշ 1	Չափանիշ 2	Չափանիշ 3	Չափանիշ 4	Չափանիշ 5	

Ելույթի գնահատման չափանիշներն են՝

1. ելույթի համապատասխանությունը գիտական աշխատանքի թեմային
2. թեմային տիրապետելու մակարդակը
3. սեփական դիրքորոշումը հիմնավորելու և հարցերին պատասխանելու ունակությունը
4. հռետորական հմտությունները
5. ելույթի համակարգվածությունը

[2] Յուրաքանչյուր չափանիշի գնահատականը որոշվում է միավորների քանակով, հետևյալ սահմաններում՝ 0-2 միավոր (շատ ցածր), 3-4 միավոր (ցածր), 5-6 միավոր (միջին), 7-8 միավոր (բարձր), 9-10 միավոր (շատ բարձր):